Հավելված N 3
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունիսի 20-ի N 956 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱ-ՅՈՂՆԵՐԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ՝ ՇՈՒՏ ՓՉԱՑՈՂ ՆՎԵՐՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սույն հավելվածով սահմանվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ պետական սեփականություն դարձած շուտ փչացող նվերների ոչնչացման դեպքերը և կարգը, ինչպես նաև առանձին տեսակի գույքի տնօրինման առանձնահատկությունները:

2. Այն դեպքերում, երբ որևէ հանրային պաշտոն զբաղեցնող անձ կամ հանրային ծառայողն ստացել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ կամ 9-րդ հոդվածների հիման վրա ողջամտորեն պետության սեփականություն դարձող և սույն որոշման N 4 հավելվածով սահմանված ցանկում ներառվող նվեր, տվյալ մարմնի գլխավոր քարտուղարը կամ այլ հավասարազոր պաշտոնատար անձը պարտավոր է նշված ցանկում ներառված նվեր ստացվելու վերաբերյալ տեղեկատվությունն իրեն հայտնի դառնալուց հետո անհապաղ այդ մասին դիմումով հայտնել կոմիտեին: Գույքը նվեր ստացած հանրային ծառայողը պարտավոր է այդպիսի գույք նվեր ստանալու դեպքում այդ մասին անհապաղ հայտնել գլխավոր քարտուղարին կամ այլ հավասարազոր պաշտոնատար անձին:

3. Այն դեպքում, երբ «Պետական արարողակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով սահմանված դեպքերում ծառայությունը նվերը հաշվառելիս կամ մինչև հաշվառելն իրեն ներկայացված տեղեկատվության հիման վրա պարզել է, որ տվյալ նվերը սույն որոշման N 4 հավելվածով սահմանված ցանկում ներառվող կամ պահպանման հատուկ պայմաններ ենթադրող գույք է, ապա պարտավոր է այդ տեղեկատվությունն իրեն հայտնի դառնալուց հետո անհապաղ այդ մասին դիմումով հայտնել կոմիտեին՝ գույքը ոչնչացնելու կամ այլ

եղանակով տնօրինելու, իսկ պահպանման հատուկ պայմաններ ենթադրող գույքի դեպքում՝ նաև դրա տեղափոխումն ու ժամանակավոր պահպանումն իրականացնելու համար:

4. Սույն հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դիմումի մեջ նշվում են՝

1) գույքի անվանումը.

2) գույքի տեսակը.

3) գույքի քանակը, ծավալը.

4) գույքի նկարագիրը (վիճակը, բաղադրություն, փաթեթավորում, այլ բնութագրիչներ).

5) գույքի վերաբերյալ այլ տեղեկություններ՝ ըստ անհրաժեշտության:

5. Սույն հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դիմումին կցվում են գույքի նկարները, առկայության դեպքում՝ նաև գույքի վերաբերյալ այլ փաստաթղթեր:

6. Սույն հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դիմումն ստանալուց հետո կոմիտեն սույն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում ապահովում է գույքի տեղափոխումն ու ժամանակավոր պահպանումը:

7. Սույն որոշման N 4 հավելվածով սահմանված ցանկում ներառված շուտ փչացող գույքը ենթակա է ոչնչացման, եթե՝

1) գույքը դյուրավառ է կամ իր այլ հատկանիշներից ելնելով ողջամտորեն կարող է վնաս պատճառել շրջակա միջավայրին.

2) գույքի պահպանման կամ պիտանիության ժամկետն անցել է կամ այդ ժամկետը կամ դրա մնացած հատվածն այնքան կարճ է, որ այդ ժամկետը կանցնի մինչ գույքը սույն որոշման N 2 հավելվածով սահմանված որևէ այլ եղանակով տնօրինելը.

3) սույն որոշման N 2 հավելվածի 21-րդ կետի հիման վրա անհնարին է գույքն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում իրացնելը նվիրաբերության, իսկ նվիրաբերության եղանակով իրացման անհնարինության դեպքում՝ հրապարակային սակարկությունների եղանակով:

8. Սույն որոշման N 4 հավելվածով սահմանված ցանկում ներառված գույքի ոչնչացման գործընթացը կազմակերպվում է կոմիտեի կողմից՝ սույն որոշման 4-րդ

կետում նշված լիազոր մարմնի կողմից սույն որոշման N 1 հավելվածի 19-21-րդ կետերով սահմանված կարգով տրված մասնագիտական խորհրդատվության հիման վրա:

9. Եթե, կախված գույքի տեսակից, դրա ոչնչացման, համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված է այլ կարգ, ապա կոմիտեն պատասխանատվություն է կրում այդ կարգերի պահանջների պահպանումն ապահովելու համար:

10. Սույն որոշման N 1 հավելվածի 19-21-րդ կետերով սահմանված կարգով տրված մասնագիտական խորհրդատվություն ստանալու դեպքում կոմիտեի ղեկավարը կայացնում է սույն որոշման N 4 հավելվածի հիման վրա շուտ փչացող համարվող գույքը ոչնչացնելու մասին որոշում՝ որոշման հիման վրա անհապաղ արձակելով գույքի ոչնչացման և այդ նպատակով համապատասխան հանձնաժողով ձևավորելու, գույքի ոչնչացման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) անդամներին այդ մասին ծանոթացնելու վերաբերյալ հրաման:

11. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են կոմիտեի գլխավոր քարտուղարը (հանձնաժողովի քարտուղար), գույքը նվեր ստացած մարմնի ներկայացուցիչը (համաձայնությամբ), կոմիտեի կամ գույքի ժամանակավոր պահպանումն իրականացրած պետական մարմնի՝ գույքը ժամանակավոր ի պահ ընդունած աշխատակիցը, ինչպես նաև սույն հավելվածի 10-րդ կետով սահմանված հրամանով ուղղակիորեն նշված այլ պաշտոնատար անձինք՝ կոմիտեի ղեկավարի հայեցողությամբ: Հանձնաժողովի կազմում իրենց համաձայնությամբ կարող են ընդգրկվել նաև գույքը նվեր ստացած մարմնի գլխավոր քարտուղարը կամ այլ հավասարազոր պաշտոնատար անձը կամ վերջիններիս հանձնարարությամբ՝ այլ պաշտոնատար անձինք, ինչպես նաև լիազոր մարմնի ներկայացուցիչները՝ համաձայնությամբ:

12.Կոմիտեի գլխավոր քարտուղարը կամ վերջինիս կողմից լիազորված այլ պաշտոնատար անձը գույքի ոչնչացման հանձնաժողովի քարտուղարն է, ով ապահովում է գույքի ոչնչացման վերաբերյալ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի կազմումը, աշխատանքների կազմակերպումը:

13. Հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է ապահովել, որ հանձնաժողովին ձևավորումից հետո անհապաղ վերջինիս տրամադրվեն ոչնչացման կամ այլ եղանակով տնօրինման ենթակա գույքի վերաբերյալ կազմված փաստաթղթերը, այդ թվում՝ նվերների ռեեստրում առկա նկարագրությունը, գույքի ժամանակավոր պահման համար կազմված փաստաթղթերը, գույքի ոչնչացման վերաբերյալ լիազոր մարմնի կողմից տրված խորհրդատվությունը:

14. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում մինչ գույքի ոչնչացման գործընթաց սկսելն ուսումնասիրում է տվյալ գույքը կոմիտեի ժամանակավոր պահպանման պահեստում կամ այն պետական մարմնի տարածքում, որտեղ պահատվության է հանձնվել գույքը, փաստաթղթերով սահմանված գույքի նկարագրությունը համեմատում է առկա գույքի հետ, դրա վերաբերյալ տեղեկությունները ներառում է գույքի ուսումնասիրության վերաբերյալ կազմվող արձանագրության մեջ՝ նշելով այն բոլոր տարբերությունները, փոփոխությունները, որոնք առկա են գույքի ուսումնասիրության պահին (եթե այդպիսիք հայտնաբերվում են):

15. Եթե գույքի և դրա վերաբերյալ կազմված փաստաթղթերի ուսումնասիրության ու համադրության արդյունքում ի հայտ են գալիս տեղեկություններ, որոնց հիման վրա տվյալ գույքը ոչնչացման ենթակա չէ, ապա հանձնաժողովն այդ մասին անհապաղ կազմում է արձանագրություն և այն անհապաղ ներկայացնում է կոմիտեի ղեկավարին:

16. Կոմիտեի ղեկավարը, հիմք ընդունելով արձանագրությունը, կարող է կայացնել գույքը սույն որոշման N 1 հավելվածով սահմանված այլ եղանակով տնօրինելու վերաբերյալ որոշում՝ հիմք ընդունելով սույն որոշման N 2 հավելվածով սահմանված՝ գույքի տնօրինման եղանակների ընտրության մեթոդաբանությունը:

17.Այն դեպքում, երբ գույքի և դրա վերաբերյալ կազմված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովն արձանագրում է, որ գույքի ոչնչացումն օբյեկտիվ պատճառով անհնարին է, ապա այդ մասին անհապաղ կազմում է արձանագրություն և այն անհապաղ ներկայացնում է կոմիտեի ղեկավարին: Արձանագրության մեջ ներկայացվում են գույքի ոչնչացման անհնարինության վերաբերյալ բոլոր տեղեկությունները:

18. Կոմիտեի ղեկավարը, հիմք ընդունելով սույն հավելվածի 17-րդ կետով նախատեսված արձանագրությունը, կայացնում է գույքը սույն որոշման N 1 հավելվածով սահմանված այլ եղանակով տնօրինելու վերաբերյալ որոշում՝ հիմք ընդունելով սույն որոշման N 2 հավելվածով սահմանված՝ գույքի տնօրինման եղանակների ընտրության մեթոդաբանությունը, իսկ, եթե սույն հավելվածի 17-րդ կետով սահմանված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ գույքի ոչնչացումն անհնարին դարձնող հիմքեր առկա չեն, դրանք վերացել են կամ գույքի ոչնչացումը հնարավոր է իրականացնել այլ եղանակով կամ պայմաններով, ապա արձանագրությունը վերադարձնում է հանձնաժողովին՝ ոչնչացման գործընթացը կազմակերպելու նպատակով:

19. Սույն կարգի 15-րդ և 17-րդ կետերով սահմանված հիմքեր չհայտնաբերվելու դեպքում հանձնաժողովն ապահովում է ոչնչացման ենթակա գույքի ոչնչացումը՝ լիազոր մարմնի եզրակացությամբ տրված ժամկետում, եղանակով և պայմաններով:

20. Ոչնչացման վերաբերյալ հանձնաժողովը կազմում է արձանագրություն, որն ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից և ոչ ուշ, քան գույքը ոչնչացնելուն հաջորդող աշխատանքային օրը ներկայացվում կոմիտեի ղեկավարին: Արձանագրության մեկ օրինակ ուղարկվում է նաև այն մարմնին, որը որպես նվեր ստացել էր ոչնչացված գույքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ